ԽՈՐԱՅՐԵՔ ՁԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

2017 թ. Մյունխենյան տեխնիկական համալսարանում մշակեցին տարածքների եռաչափ հոլոգրամների ստացման տեխնոլոգիա: Տեխնոլոգիան հնարավորություն է տալիս վերարտադրել ցանկացած ինտերիեր՝ ոչ մեծ բնակարաններից մինչև հսկայական բիզնես կենտրոններ: Ապագայում տեխնոլոգիան պլանավորում են օգտագործել ոչ միայն շինարարության մեջ ու դիզայնում, այլ նաև փլված շենքերի տակ հայտնված մարդկանց փրկելու համար:

Ժամանակակից երաժիշտները ևս ակտիվորեն օգտագործում են այս տեխնոլոգիան: 2006 թ. «Գրեմմ» մրցանակաբաշխության ժամանակ, Մադոննան ելույթ ունեցավ մի սցենայում Gorillaz խմբի հետ, որոնց մուլտիկային պատկերները վերարտադրվել էին հոլոգրաֆիայի օգնությամբ: ԱԲԲԱ խումբը 2021 թ. ներկայացրեց մի ամբողջ հոլոգրաֆիական շրջագայություն:

Ներկայումս ակտիվորեն զարգանում են հոլոգրաֆիական կինոն ու հեռուստատեսությունը: Կինոյում առկա է մեծ էկրանի պրոբլեմը: Քանի որ հոլոգրաֆիկ պատկերները տեսանելի են դառնում որոշակի սահմանափակ անկյունային տիրույթում, մեծ թվով մարդիկ չեն կարող այն դիտել: Այս, ինչպես նաև առավել շարժուն պատկերների խնդիրը ենթադրվում է որ կլուծվեն մոտ ապագայում:

Հոլագրաֆիական հեռուստատեսությունն էլ իր պրոբլեմներն ունի: Բարձրորակ եռաչափ պատկերներ հեռուստատեսությամբ հաղորդելու համար անհրաժեշտ է հեռուստատեսային կապուղու մի քանի հազար անգամ ավել թողարկման ընդունակություն, քան հիմա օգտագործվում է: Լայնաշերտ կապուղիներ ապահովվում են օպտիկամանրաթելային կապի միջոցով: Նման կապի ապահովման դեպքում հոլոգրաֆիական հեռուստատեսությունը ևս զարգացման լուրջ հեռանկար է խոստանում:

Հոլոգրաֆիան հաջողությամբ օգտագործվում է տեղեկույթի օպտիկական կրիչներ ստեղծելու համար: Ավանդական օպտիկական սկավառակները տեղեկույթը պահպանում են իրենց մակերևույթին: Հոլոգրաֆիայի օգ-

նությամբ հնարավորություն ենք ստանում տեղեկությունը գրանցել ծավալային նյութում՝ տարբեր անկյունների տակ: Արդյունքում կարելի է գրանցել անհամեմատ ավելի շատ (տերաբայտերի հասնող) տեղեկություն: Նկատելիորեն մեծանում են նաև տվյալների պահպանման, մշակման և փոխանցման արագությունները:

Հոլոգրամներն օգտագործում են կրեդիտային քարտերում և բանկնոտներում անվտանգության բացարձակ երաշխիքներ ստեղծելու համար: Քանի, որ ինչպես ասացինք, հոլոգրամների կեղծման և պատկերների վերականգնման համար չափազանց բարդ սարքեր են պահանջվում:

Հոլոգրաֆիան կիրառություն է գտել նաև զվարճանքի ոլորտում: Հոլոգրամների օգնությամբ ստեղծվում են տպավորիչ տեսողական էֆեկտներ, ցուցադրում զանազան ապշեցուցիչ ֆոկուսներ: